Միջազգային փորձագետները ԼՂԻՄ-ի մասին

«Նեզավիսիմայա գազետա»ն իր մայիսի 30-ի համարում գրում է, որ մայիսի 29-ին Մոսկվայում կայացած Սախարովյան կոնգրեսի մասնակից-փորձագետների միջազգային խմբի մամլո ասուլիսը նվիրված էր Լեռնային Ղարաբաղ եւ Հայաստան նրանց կատարած այցելությանը: Ադրբեջանական կողմն այս անգամ էլ արգելել է միջազգային փորձագետների խմբին այցելել Ադրբեջան: Խմբի նպատակը շրջանում ստեղծված իրադրությանն ավելի մոտիկից ծանոթանալն էր, փաստաթղթերի եւ ապացույցների հավաքագրումը, որն էլ նրանք ստացել են հայ փախստականներից, Հայաստանի պաշտոնական ղեկավարությունից, խորհրդային սպաներից եւ զինվորներից, ադրբեջանական ՕՄՈՆ-ից: Նույն օրն առավոտյան փորձագետներին ընդունել են նաեւ ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովը եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Ա. Լուկյանովը: Ըստ փորձագետների, որոնք ընդհանուր դժգոհություն արտահայտեցին նշված հանդիպումներից, Լուկյանովը չի ժխտել այն տեղեկությունը, թե ծրագրվում է Ադրբեջանի Շահումյանի շրջանի եւ 9 հայկական գյուղերի տեղահանումը: Լուկյանովն ու Յազովը խոստացել են, որ հարցի լուծման հսկումը կվերցնեն իրենց ձեռքը: